«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ

Գյումրու երիտասարդական խորհուրդ

ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

«Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում» Ազգային փորձագետի առաջադրանքի տեխնիկական բնութագիր

Անվանում	Երիտասարդական ոլորտի ազգային փորձագետ
Գործունեության վայր	ք. Գյումրի

Ծրագրի համառոտ նկարագրություն.

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն և «Գյումրու երիտասարդական խորհուրդ» անկախ փորձագիտական խումբը համատեղ իրականացնում են «Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում» ծրագիրը՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ:
Ծրագրի նպատակն է նպաստել Գյումրու երիտասարդության կյանքի որակի բարելավմանն ու հիմնախնդիրների լուծմանը՝ կարիքների վրա հիմնված տեղական երիտասարդական քաղաքականության մշակման ու կիրառման միջոցով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և ներդնել Գյումրու երիտասարդական քաղաքականություն (այսուհետ՝ ԳԵՔ):

Փորձագետի հիմնական պարտականությունները.

- ֆոկուս-խմբային քննարկումների կազմակերպում երիտասարդական խմբերի հետ,
- ԳԵՔ փաստաթղթի նախնական տարբերակի մշակում,
- ԳԵՔ փաստաթղթի նախնական տարբերակի փորձագիտական քննարկումների կազմակերպում,
- ԳԵՔ փաստաթղթի վերջնական տարբերակի մշակում,
- փաստաթղթի ներկայացում և քննարկում Գյումրու ՏԻՄ թեկնածուների և ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ:

Անհրաժեշտ որակավորում.

- ազգային մակարդակով երիտասարդական ոլորտում աշխատանքային փորձ,
- երիտասարդաքական քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրություն և/կամ տեղեկացվածություն,
- ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության վերաբերյալ գիտելիքներ ու տեղեկացվածություն,
- ֆոկուս խմբային քննարկումներ կազմակերպելու փորձ,
- քաղաքացիական հասարակության կառույցների հետ դրական աշխատանքային հարաբերություններ կառուցելու և նրանց հետ համագործակցելու կարողություն,
- գրավոր և բանավոր հայերենի գերազանց իմացություն փաստաթղթի հետ աշխատանքի համար,
- անգլերենի իմացությունը ցանկալի է:

Ժամանակացույց.

սկիզբը՝ 2016թ. հունիսի 6,

ավարտը՝ 2016թ. օգոստոսի 30:

Աշխատանքները պետք է իրականացվեն ըստ նախապես ներկայացված ժամանակացույցի:

Դիմումների ներկայացման կարգը.

հետաքրքրված անձինք պետք է ուղարկեն՝

- կենսագրական (CV)՝ ընդգծելով նման առաջադրանքներ կատարելու փորձը,
- հետաքրքրվածության նամակ:

Անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկել **compassgyumri@gmail.com** էլ. հասցեին՝ մինչև **01.06.2016թ**. ներառյալ՝ թեմա բաժնում նշելով ***ազգային փորձագետ***:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ծրագրի ղեկավար **Հայկարամ Դրմեյանին՝** հեռ. (+374) 98 18 15 19, էլ. հասցե՝ drmeyan92@gmail.com: